«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Տրական հոլովի իմաստային առումների ուսուցման առանձնահատկությունները 12-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Հասմիկ Սամվելյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Տիգրան Մեծ»-ի անվան ՌՄՀ վարժարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……..……..……..……...……..3

ԳԼՈՒԽ I

Տրական հոլովը ժամանակակից հայերենում ……..……...……5

ԳԼՈՒԽ II

Տրական հոլովի իմաստային առումների ուսուցման առանձնահատկությունները 12-րդ դասարանում ……..……..……...…….. 8

Եզրակացություն……..……..……...……..…….. 20

Օգտագործված գրականության ցանկ……..……...……..… 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հանրակրթության ավագ դպրոցի 12-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում ներառված է հայերենի հոլովների ուսուցումը ընդհանուր առմամբ: Աշակերտները յոթերորդ դասարանում են ծանոթանում այս հոլովներին և անդրադառնում միայն դրանց շարահյուսական գլխավոր կիրառություններին: Յուրաքանչյուր հոլովի ուսուցմանը հատկացվում է մեկ դասաժամ, որը բավարար չէ նյութի հիմնավոր յուրացման համար: Հայտնի է, որ աշակերտները դժվարությամբ են տարբերում տրական հոլովը կիրառության մեջ: Շփոթից խուսափելու և ավագ դպրոցի հումանիտար հոսքի աշակերտներին այս հոլովի վերաբերյալ առավել խորքային գիտելիքներ հաղորդելու համար մշակել ենք տրական հոլովի իմաստային առումների ուսուցման մեթոդական համալիր, ինչն էլ կօգնի այս հոլովի հեշտ տարբերակմանը: Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոխվել են հոլովների կիրառական մի շարք առանձնահատկություններ, ինչի հետևանքով էլ ի հայտ են եկել տրական հոլովի դրսևորման մի շարք նոր ձևեր, իսկ որոշ կիրառություններ էլ դարձել են հնաբանություններ. իմաստային առումների վրա շատ մեծ ազդեցություն ունի ժամանակային գործոնը: Ավագ դպրոցի հումանիտար հոսքի աշակերտների կողմից տրական հոլովի իմաստային առումների ըմբռնման, գործնականորեն ամրապնդման, լեզվամտածողության զարգացման գործում նրա ունեցած դերի գիտակցման, կարևորման ու գնահատման համակարգով է պայմանավորված հետազոտության արդիականությունը :

Հետազոտության նպատակը: Հետազոտության նյութ դարձնելով տրական հոլովի իմաստային առումների ուսուցման առաձնահատկությունները 12-րդ դասարանում՝ նպատակ ենք ունեցել մշակել թեմայի արդյունավետ ուսուցման մեթոդական համալիր՝ հենված գլխավորապես համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների վրա: Նպատակ ենք ունեցել ընդգծելու տրական հոլովի վերաբերյալ լեզվական խորքային գիտելիքների հաղորդման կարևորությունը ավագ դպրոցի հումանիտար հոսքի աշակերտների համար:

Հետազոտության խնդիրները:

1. Բացահայտել տրական հոլովի իմաստային առումների ուսուցման տեղն ու դերը ավագ դպրոցի աշակերտների լեզվամտածողության զարգացման գործում,
2. քննել տրական հոլովի՝ առավել տարածված իմաստային առումները և կատարել համապատասխան եզրահանգումներ,
3. աշխատանքի տեսական դրույթները հիմնավորել Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից քաղաբերված օրինակներով,
4. մշակել իմաստային առումների ուսուցման մեթոդական համակարգ, որը կնպաստի թեմայի արդյունավետ յուրացմանը,
5. ներկայացնել թեմայի ամրապնդմանը նպաստող վարժությունների համակարգ,
6. սահմանել տրական հոլովի իմաստային առումների ուսուցման քայլաշար:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունն իրականացվել է ժամանակակից մեթոդների միջոցով: Ուսումնասիրության մեթոդներն ընտրվել են մեր առջև դրված նպատակին, խնդիրներին ու գիտական վարկածին համապատասխան:

Թեմայի ուսուցման ժամանակ առաջարկում ենք կիրառել «Մտագրոհ», «Դիագրամների բուրգ», Т-ձև աղյուսակ, «Եռաստիճան հարցազրույց» մեթոդները:

Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը: Լեզվական նյութի վերաբերյալ հետազոտությունների հիման վրա կատարել ենք որոշակի ընդհանրացումներ, համակարգումներ: Այս առումով մեր աշխատանքն ունի տեսական կարևոր նշանակություն հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար:

Հետազոտության մեջ ներկայացրել ենք թեմայի ուսուցման քայլաշար, մեթոդական որոշակի նյութեր, որոնք հետագայում կարող են օգտակար լինել հայոց լեզվի ուսուցիչներին:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից: Այն ունի եզրակացություններ և օգտագործված գրականության ցանկ:

Հետազոտության ծավալը համակարգչային 22 էջ է:

ԳԼՈՒԽ I

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տրական հոլովի անվանումը կապվում է *տալ* բայի հետ: Հոլովը կազմվում է սեռական հոլովի համանունությամբ. մի դեպքում կազմվում է մասնիկավորմամբ, մյուս դեպքում՝ հնչյունական հերթագայությամբ: Հիմք ընդունելով սեռական և տրական հոլովների ձևային նմանության հատկանիշը՝ քերականագիտության մեջ տարբեր տեսակետներ են առաջ քաշվել սեռականի՝ առանձին հոլով չլինելու առնչությամբ: Այսպես՝ հինգհոլովականները սեռականը տարրալուծում են տրականի մեջ. չեն ընդունում նաև հայցական հոլովը՝ հաշվի առնելով միայն ձևային տարբերակման հատկանիշը, այնինչ «հոլովը ձևի և իմաստի սերտ միասնություն է: Չկա հոլով առանց իմաստի և ձևի: Սա հիմք ընդունելով և քերականական համանունությունը նկատի ունենալով հոլովական հարացույցում՝ կարող ենք ասել, որ ժամանակակից հայերենի գոյականն ունի յոթ հոլով: Ամեն մի հոլով ունի իր իմաստները, այսինքն՝ առարկայական հարաբերությունները: Իրենց երկրորդական իմաստներով հոլովները կարող են համընկնել»[1] :

Որոշյալ առման դեպքում տրականի համանունությունը սեռականի հետ վերանում է, որովհետև տրական հոլովը կարող է որոշիչ հոդ ստանալ, իսկ սեռականը՝ ոչ: Տրական հոլովը, համանունություն ունենալով սեռականի հետ, իր իմաստով և շարահյուսական կիրառություններով լիովին տարբեր է սեռական հոլովից: Սեռականով արտահայտվում են միջառարկայական հարաբերություններ, իսկ տրականով՝ առարկայի և գործողության միջև հարաբերություններ: Հետևաբար, շարահյուսական կիրառությամբ սեռականը լինում է գոյականի լրացում, իսկ տրականը՝ բայական անդամի լրացում: Եթե սեռականը առարկայի թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումների դեպքում որոշիչ հոդ չի ստանում, ապա տրականը ստանում է[2]:

Տրական հոլովի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գոյականի որոշյալ կամ անորոշ առումը, այսինքն՝ տվյալ դեպքում սեռական և տրական հոլովների զանազանման

---

[1] Խալաթյան Գ., Զուլֆայան Ռ., Տեսական և գործնական հայոց լեզու(ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, էջ 51:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

հարցում որոշյալ հոդերը կատարում են հոլովատարբերակիչ դեր: Ընդ որում, եթե գոյականի վրա ավելացող հոլովիչի վերջին հնչյունը ձայնավոր է, ավելանում է ն հոդ, իսկ բաղաձայնի դեպքում՝ ը (սարին, ոզնուն, բայց՝ անկյանը, ընկերությանը, եղբորը...): Ահա այս տարբերությունները լիովին հիմք են տալիս ասելու, որ սրանք ոչ թե մեկ հոլով են, այլ՝ ինքնուրույն, առանձին հոլովներ, բայց համանուն հոլովաձևեր: Ձևային հակադրությունն ավելի ցայտուն է երևում դերանունների հոլովման հարացույցում՝ ես-իմ-ինձ: Վ. Առաքելյանը անդրադարձումներ ունի նաև տրական և հայցական հոլովների տարբերակմանը: Նա գրում է, որ ինչպես հայցական հոլովը, այնպես էլ տրականը նախադասության մեջ հիմնականում կապվում են բայի հետ և դառնում նրա համար խնդիր: Բայց հայցականը ուղիղ խնդիր է և ավելի մեծ անհրաժեշտություն է ներկայացնում գործողության համար, քան տրականը: Հայցականը անմիջականորեն է ընկնում բայի գործողության ոլորտը, և գործողությունը ուղղակի կերպով անցնում է նրա վրա: Տրականը, սակայն, հեռավոր ձևով է շոշափվում գործողության կողմից[3]:

Քերականագիտության մեջ տրական հոլովի հիմնական իմաստը համարվում է հանգումը: Լեզվաբան Մանուկ Աբեղյանը, որն ընդունում էր հինգ հոլով, տրական հոլովի հիմնական իմաստը հանգումն է համարում, այսինքն՝ տրականը ցույց է տալիս հանգման առարկան՝ այն անձը կամ իրը, որին իբրև մի նպատակի դիմում, մոտենում, մատուցվում է մի բան, կամ որին ուղղվում, անցնում է գործողությունը (մատուցման տրական)[4]:

Տրական հոլովի նշանակությունն այն է, որ գործողության մասնակից անձին ուղղվում է մի բան, և որը գիտակցաբար ստանում, ընդունում է այն: Տրականն այս նշանակությամբ մեծ մասամբ գործածվում է գրաբարում, օրինակ՝ «...պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն»[5]: Բայց այժմ այս հոլովի նշանակությունն ավելի ընդարձակվել է, և շատ խնդիրներ, որոնք հին հայերենում դրվում էին ի, առ, ընդ և այլ նախդիրներով հայցական հոլովի հետ գործածությամբ իբրև գործողության հանգման նպատակակետ, դրվում են տրական հոլովով[6]:

---

[3] Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 90-91:

[4] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 428:

[5] Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 294:

[6] Տ՛ես Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, էջ 442:

Է. Աղայանը, որը վեց հոլովի տեսակետն էր պաշտպանում, գրում է. «Ամենասովորական ու հիմնական իմաստն է հանգման իմաստը. թե՛ մատուցման խնդիրը, թե՛ հանգման խնդիրը և թե՛ հանգման տեղի պարագան ցույց են տալիս այն առարկան կամ անձը, որին հանգում է կա՛մ գործողությունը, կա՛մ մի այլ առարկա» [7], իսկ հատկացումը սեռական հոլովի իմաստ է համարում, այնինչ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը սեռականն ու տրականը միավորում է մեկ հոլովի մեջ և նրա ընդհանուր իմաստը համարում է հատկացումը[8]:

Սեռականն ու տրականը մի հոլովի մեջ է միավորում նաև Մ. Ասատրյանը: Հայցական հոլովը չունի ուղղականից ու տրականից տարբեր, իսկ սեռականն էլ տրականից տարբեր բավարար ձևաբանական հատկանիշ, ուստի ըստ նրա՝ հայերենն ունի 5 հոլով՝ ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական և ներգոյական: Սեռական-տրականը՝ որպես բայից, բայանունից կամ ածականից կախված ձև, ցույց է տալիս նախ հանգման կամ մատուցման խնդիրը: «Եթե ամենաընդհանուր ձևով սահմանվի սեռական-տրականի իմաստը, ապա դա պետք է համարվի հանգման իմաստը, որը սեռական-տրականի՝ վերադրի պաշտոնում հանդես է գալիս որպես առարկայական հանգում (վերաբերություն, ստացականություն), իսկ ոչ վերադրի պաշտոնում՝ որպես գործողության հանգում (ուղղվածություն դեպի առարկան)»[9]:

Տրական հոլովի իմաստային առումները բազմազան են: Խոսքի մեջ տրական հոլովով դրված բառերը կապվում են ստորոգյալի հետ և դառնում դրա լրացումներ, որոնք արտահայտում են երկու կարգի հարաբերություններ՝ խնդրային և պարագայական: Դառնում է նաև գոյականական անդամի լրացում՝ բացահայտիչ: Կներկայացնենք առավել տարածում գտած և գործածական իմաստային առումները՝ ասվածը հիմնավորելով Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից քաղաբերված օրինակներով:

---

[7] Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 226-227:
[8] Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 90:
[9] Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, 1989, էջ 63, 68:

ԳԼՈՒԽ II

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12-ՐԴ

Հանրակրթության միջին դպրոցում հոլովների ուսուցմանը հատկացված է յոթ դասաժամ, այսինքն՝ մեկական ժամ յուրաքանչյուր հոլովին: Կարծում ենք, որ մեկ ժամը բավարար չէ տրական հոլովի խորքային ընկալման համար, ինչի հետևանքն էլ աշակերտների խոսքում խնդրառական սխալներն են ու այս հոլովի չտարբերակումը հայցականից: Հաշվի առնելով այս խնդիրները՝ ավագ դպրոցի 12-րդ դասարանում առաջարկում ենք հայոց լեզվի դասերին ևս մեկ ժամով ուսումնասիրել տրական հոլովի իմաստային առումները՝ դրանք քննելիս հենվելով ծրագրային նյութից ընտրված օրինակների վրա: Տրական հոլովի շարահյուսական կիրառությունների ուսումնասիրությունը կնպաստի աշակերտների ճիշտ խոսք կառուցելուն, և նրանց խոսքում կնվազեն խնդրառական սխալները: Իհարկե, ուսուցչի խնդիրն է զարգացնել աշակերտի և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքը, բայց շեշտը առավելապես պետք է դնել բանավորի վրա, որի թերությունները գրավորի համեմատ զգալի են: Լուրջ ուշադրություն պետք է դարձնել բանավոր խոսքին ներկայացվող պահանջներին: Տրական հոլովի իմաստային առումների իմացությունը կնպաստի խոսքում խնդրառական սխալներից խուսափելուն, կօգնի ընկալել հոլովված բառերի դրսևորումները խոսքում, աշակերտները կխորացնեն իրենց գիտելիքները հոլովների վերաբերյալ՝ առնչվելով իրենց անծանոթ իմաստային առումներին, հստակ կտարբերակեն անձնանիշ գոյականների՝ հայցականով կիրառությունները տրականով կիրառություններից: Այս ամենի արդյունքում կզարգանա աշակերտների լեզվամտածողությունը:

Փորձը ցույց է տալիս, որ հայոց լեզվի ուսուցման ընթացքում վարժությունների մեծ մասը կատարվում է առանձին բառերի շուրջ. բացակայում է կապակցված խոսքը: Այնինչ, կապակցված խոսքը, ամփոփ միտք արտահայտող փոքրիկ տեքստը լայն հնարավորություն են ընձեռում սեփական խոսքում տեղին գործածելու արդեն ծանոթ բառերը՝ դրանք կապակցելով համապատասխան միջոցներով:

Հոլովների իմաստային առումներն ուսուցանելիս շատ կարևոր է որևէ բնագրով աշխատանքը (տվյալ դեպքում ընտրել ենք «Ծաղկած փշալարեր» վիպակը), որովհետև գեղարվեստական գրականությունը ավելի լայն հնարավորություն է ընձեռում աշակերտների ինչպես բառապաշարի հարստացման, այնպես էլ պատկերավոր մտածողության զարգացման համար: Ընդհանրապես լեզվի դասերին խրախուսելի է գրականության հետ միջառարկայական կապերի հաստատումը:

Թեման ուսուցանելիս անհրաժեշտ է անդրադառնալ մի շարք առանցքային հարցերի, որոնք կարող են նպաստել աշակերտների՝ թեմայի դյուրին յուրացմանը: Տրական հոլովի իմաստային առումները ուսուցանելիս ուսուցիչը պետք է հենվի աշակերտների ունեցած գիտելիքների վրա: Ընդ որում, նոր գիտելիքներ ձեռք բերելու՝ աշակերտների հնարավորությունը մեծ մասամբ կախված է նրանց ունեցած նախնական գիտելիքների պաշարից, և «այն աշակերտները, որոնք ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից[10]»: Ավագ դպրոցի աշակերտները հիմնական դպրոցում արդեն ստացել են բավարար գիտելիքներ հոլովների վերաբերյալ, և այս նյութը յուրացնելիս պետք է հենվեն այդ գիտելիքների վրա:

Տրական հոլովը նախադասության մեջ հիմնականում դառնում է բայի լրացումներ, հետևաբար այս հոլովի իմաստային առումները որոշելիս պետք է ուշադրություն դարձնել բային, այսինքն՝ այս հոլովով դրված բառերի շարահյուսական կիրառությունների նրբիմաստները կախված են բայի արտահայտած իմաստից, նաև սեռից: Հետևաբար աշակերտները պետք է կարողանան տարբերակել բայի իմաստային խմբերը: Բայն ունի երեք կարևոր հատկանիշ՝ բայիմաստ, խնդրառություն և սեռ: Ինչպես արդեն նշեցինք, բայիմաստը և սեռը մեծ դեր ունեն հոլովների նրբիմաստների տարբերակման հարցում, ուստի առաջին քայլը բայիմաստի և բայի սեռի կրկնությունն է: Հարկ է նշել, որ կան բազմիմաստ բայեր, որոնք տարբեր խոսքային միջավայրերում հանդես են գալիս տարբեր իմաստներով: Այդ առնչությամբ Ռ. Դոխոյանը գրում է. «Բայի իմաստային կառուցվածքում, բուն իմաստից բացի, կարող են լինել նաև հուզաարտահայտչական, գնահատողական և ոճական

[10] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 11:

հավելիմաստային տարրեր[11]»: Այսպիսով, հոլովների նրբիմաստների տարբերակման հարցում կարևորվում է բայիմաստը:

Հայտնի է, որ հայցական հոլովը ներգործական սեռի բայերի լրացումն է, որի իմացությունը կանխում է անձնանիշ գոյականի տրականաձև կիրառության շփոթը տրական հոլովով դրված անձնանիշ գոյականից:

Բայը և նրա՝ տրականով դրված լրացումները կազմում են շարահյուսական կառույցներ, իսկ «…շարահյուսական կառույցի միջև առկա իմաստային հարաբերության (խորքային կառուցվածք) կառավարումն արտահայտվում է իբրև խնդրառություն (ուտել հաց, գրել նամակ, մոտենալ սեղանին, հեռանալ սեղանից, գրել գրիչով), պարագառություն (ապրել Երևանում, գնալ տուն, ցրտից դողալ, կանգնել հատակին), ստորոգառություն (մարդ կոչել, ուսանող դառնալ)[12]»: Հավելենք, որ տրական հոլովի տարբերակման հարցում երբեմն օգնում է խնդրառությունը, որը հատուկ է բայերին, մասամբ՝ բայանուն գոյականներին և ածականներին:

Որոշ դեպքերում հատկապես դպրոցում սովորողների համար կողմնորիչ դեր են կատարում հարցադրումները: Այս եղանակը հատկապես օգնող է պարագայական իմաստների որոշման դեպքում:

Թեմայի ուսուցման մեջ գլխավոր շեշտը պետք է դնել օրինակների վրա: Աշակերտներին քերականական նյութը պետք է մատուցել հնարավորինս շատ օրինակներով, և ամբողջ ընթացքում նրանք պետք է աշխատեն բնագրային օրինակներով: Ս. Խաչատրյանն իր «Ուսուցման արդյունավետ հնարներ» գրքում առանձնացրել է արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ, որոնց մեջ տեղ է գտել նաև օրինակներով ուսուցումը: Հեղինակը նկատել է, որ ուսուցիչները հաճախ բերում են ընդամենը մեկ օրինակ, բայց «եթե ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի, ապա նյութը հասկացող աշակերտների թիվը էապես կավելանա[13]»:

Ավագ դպրոցում փոխվում են ուսուցման բովանդակությունը, աշակերտների ուսումնական գործունեության ձևերն ու եղանակները, ուսուցումը նոր ուղղություն է

---

[11] Դոխոյան Ռ., Ասացական բայերի ոճական առանձնահատկությունները, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 130:

[12] Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 41:

[13] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 17:

ստանում, որի դեպքում կարևորվում է խորքային գիտելիքների ստացումը: Կարծում ենք՝ ավագ դպրոցում նպատակահարմար է խորացնել աշակերտների՝ հոլովների վերաբերյալ ունեցած գիտելիքները: Ավելի շատ կարևորվում են ավագ դպրոցի աշակերտների մտածական գործունեությունը, ինքնուրույն-հետազոտական աշխատանքը, գիտելիքի ձեռքբերման գործում նրանց գործուն մասնակցությունը, վերլուծական, համադրական կարողությունները, «շեշտադրվում են լեզվամտածողության, հաղորդակցական կարողությունների, խոսքային գործունեության հմտությունների, տարբեր սկզբնաղբյուրներով ինքնուրույն աշխատելու որակների ամրապնդումը և ընդլայնումը[14]»: Ավագ դպրոցում ուսուցիչը ոչ թե պետք է դառնա պատրաստի գիտելիքների փոխանցող, այլ պետք է ստանձնի ուղղորդողի դեր: Դասերի ընթացքում ցանկալի է ցուցադրել տեսասահիկ, եթե կա դրա հնարավորությունը: Ուսուցման ժամանակ ոչ թե չոր դատողություններ պետք է անել, այլ կարողանալ մատչելիության սկզբունքով դասի ուսուցումը դարձնել դյուրին և մեծացնել դասագործընթացի գործնականությունը: Ավագ դպրոցի սովորողներին հնարավորություն է տրվում զարգացնելու քննադատական մտածողությունը և ինքնուրույն վերլուծություններ կատարելու հմտությունները:

Դասերի ընթացքում մեծ դեր ունեն նաև դիդակտիկ նյութերը, որոնք օգնում են վերացական նյութը «առարկայացնելուն»: Դիդակտիկ նյութերից առաջնային են տեսասահիկը (եթե կա դրա հնարավորությունը) և վիպակի բնագիրը: Կարևորվում է նոր տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունը աշակերտակենտրոն ուսուցման գործընթացում:

Դասի մուտքից մեծ բան է կախված, ուստի այն հնարավորինս կազմակերպված պետք է անցկացնել: Դասի նախապատրաստական փուլում անհրաժեշտ է վերհանել աշակերտների նախնական գիտելիքները տրական հոլովի, բայիմաստի, բայի սեռի, խնդրառության, խնդիրների, պարագաների վերաբերյալ: Նոր նյութը ուսուցանելիս ուսուցիչը հենց այս գիտելիքների վրա պետք է հենվի: Գիտելիքները վերհանելու հարցում կարող է օգնել «Մտագրոհ» մեթոդը: Արդյունավետ կլինի նաև «Բանավոր շրջանագիծ» մեթոդի

[14] Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Դիշաղաջյան Ն., Փուլային ուսուցման եղանակ (ավագ դպրոց), Երևան., 2014, էջ 5:

կիրառությունը[15]: Տրական հոլովի ուսուցման գործընթացում «Т-ձև աղյուսակ», ինչպես նաև «Վեննի դիագրամ» մեթոդների կիրառությամբ սովորողները կկարողանան քննել դիտարկվող հոլովը համակողմանիորեն:

Դասի ընկալման փուլում աշակերտների գերխնդիրը նյութի բովանդակությունն ընկալելն է: Իրականացվում է նոր նյութի ուսուցումը: Ուսուցիչը խնդիր ունի մատչելի ձևով ներկայացնելու նյութը՝ միաժամանակ ապահովելով աշակերտների ակտիվ մասնակցությունը այդ գործընթացին: Թեմայի ուսուցման ժամանակ առավել արդյունավետ կլինեն տարատեսակ խմբային աշխատանքները, տեխնոլոգիաների կիրառությունը, համագործակցային մեթոդների ակտիվ գործադրումը: Այս փուլի սկզբում ուսուցիչը պետք է որոշ չափով ներկայացնի թեման: Տրական և հայցական հոլովների իմաստային առումների մասին խոսելիս շատ կարևոր է, որ ուսուցիչը ոչ թե դրանք ամբողջությամբ պատմի, այլ պարզապես հակիրճ ներկայացնի այն հիմնախնդիրները, որոնք կնպաստեն թեմայի դյուրին յուրացմանը: Դրանք կարելի է հաղորդել կարճ դասախոսությամբ կամ տեսադասախոսությամբ (դասախոսություն՝ զուգակցված տեսապատկերով): Նյութի հաղորդման ժամանակ արդյունավետ կլինեն տարատեսակ խմբային աշխատանքները և համագործակցային մեթոդները, ինչպես՝ «Խմբային հետազոտություն», «Շրջագայություն պատկերասրահում», «Եռաստիճան հարցազրույց», «Ուսումնական նվաճումներ»[16]: Արդյունավետ կլինի նաև «Կենտրոններով աշխատանք» մեթոդի կիրառումը[17]: Ուսուցիչը դասի իմաստի ընկալման փուլում ըստ նպատակահարմարության կարող է գործադրել այս մեթոդները:

Դասի ամփոփման փուլում անհրաժեշտ է ամրապնդել նոր ստացած գիտելիքները: Ուսուցչի խնդիրն է պարզել, թե ինչքանով են աշակերտները յուրացրել թեման: Մանկավարժական պրակտիկան իրականացնելիս բազմիցս նկատել ենք, որ ուսուցիչները դասի ամրակայմանը քիչ ուշադրություն են դարձնում, ինչի արդյունքում նյութի յուրացումը ամբողջովին չի կատարվում: Դասի առաջնահերթություններից է ամփոփման փուլում կատարվող արդյունավետ աշխատանքի իրականացումը: Մանկավարժական պրակտիկայի

[15] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, էջ 15, 28, 75, 96:

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

[17] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 31:

ընթացքում դասերը անցկացնելիս այս փուլում «Մետաիմացության թերթիկ», «Վեց W-երի ռազմավարություն» մեթոդների կիրառմամբ գրանցել ենք բավական բարձր ցուցանիշներ[18]: Կարելի է նաև խմբերով աշխատանքներ իրականացնել: Ուսուցիչը կարող է նախօրոք հարցեր պատրաստել ու տեսասահիկով հերթով ցուցադրել: Օգտակար կարող են լինել թեմայի շուրջ քննարկումները, մանավանդ երբ քննարկման նյութ դառնում են թեմայի այն հասկացությունները, որոնք աշակերտները չեն հասկացել:

Առաջարկում ենք հանրակրթության ավագ դպրոցի հումանիտար հոսքի տասներկուերորդ դասարանում մեկ դասաժամով ուսումնասիրել տրական հոլովի իմաստային առումները: Հարկ է նշել, որ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը ուսուցանվում է ավագ դպրոցի XII դասարանում: Մեր առաջադրած մեթոդական համակարգը բավական արդյունավետ կարող է լինել աշակերտների ձևաբանական գիտելիքները հարստացնելու գործում: Մեր ենթադրությամբ ավագ դպրոցի հումանիտար հոսքում սովորողների հիմնական մասը կարող է ուսումը շարունակել բուհերի մասնագիտական ֆակուլտետներում, հետևաբար տրական հոլովի նրբիմաստների ուսուցումը նույնիսկ անհրաժեշտ է այն դասարաններում, որոնք համալրված են բանասիրական ուղղվածություն ունեցող սովորողներով:

Դաս

Դասարան- XII

Դասի թեման- Տրական հոլովի նրբիմաստները

Դասի տեսակը- Նոր նյութի հաղորդման

Դասի նպատակները՝ աշակերտները

-կսովորեն տրական հոլովի նրբիմաստները,

-կկարողանան տարբերել տրական հոլովին առնչվող խնդրառական իրողությունները,

-կզարգացնեն բանավոր խոսք կառուցելու կարողությունները,

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

-կկարողանան խոսքում տարբերել տրական և հայցական հոլովները:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Քայլ 1. Ուսուցիչը հարցերի միջոցով պարզում է, թե աշակերտները ինչ են հիշում տրական հոլովից:

Ի՞նչ է ցույց տալիս տրական հոլովը և ի՞նչ հարցերի է պատասխանում:

Նախադասության մեջ ի՞նչ շարահյուսական արժեքներով է հանդես գալիս:

Տրական հոլովը հիմնականում նախադասության ո՞ր անդամին է լրացնում:

Քայլ 2. Աշակերտները գծում են «Դիագրամների բուրգ»՝ տրական հոլովին բնորոշ հարցադրումներով և շարահյուսական արժեքներով:



Իմաստի ընկալման փուլ

Քայլ 3. Ուսուցիչը տեսադասախոսությամբ ներկայացնում է տրական հոլովի՝ սովորողներին անծանոթ նրբիմաստները: Նախ բացատրում է, թե ինչ է նրբիմաստը, ապա

ներկայացնում, թե ինչ սկզբունքներով աշակերտները կարող են տարբերակել իմաստային առումները. ուշադրություն պետք է դարձնել բայիմաստին, խնդրառությանը, սեռին:



Քայլ 4. Ուսուցիչը ասում է, որ տրական հոլովը նախադասության մեջ հանդես է գալիս խնդրային և պարագայական բազմաթիվ իմաստներով: «Մտագրոհի» միջոցով աշակերտները թվարկվում են բայական անդամի՝ իրենց ծանոթ լրացումները՝ խնդիրները և պարագաները:



Քայլ 5. Տեսասահիկի վրա երևում է Տ-ձև աղյուսակը՝ հետևյալ պատկերով:

Տեսասահիկով ռուսուցիչը ներկայացնում է տրական հոլովի խնդրային և պարագայական նրբիմաստների անվանումները: Գրատախտակին գրում է «Ծաղկած փշալարեր վիպակից ընտրված օրինակներ:

Իրենց օրաբաժին հացը տվին սափրիչներին: (մատուցման)

Նրանք էլ պատմում էին հայրերին: (հաղորդման)

Այս տեսությունը կըրխ-դարիմանցի Սերոբին էր պատկանում: (ստացական)

Ինքն ասես վերածվեց բնական մեծության կավե արձանի: (վերածման)

Կալանավորների դեմքներին ոչ մի մկան չէր շարժվում: (տեղի)

Լուսաբացին միայն նրա քունը տարավ: (ժամանակի)

Երեկոյան կողմ բրուտանոց մտավ Բիչկոն՝ կարճ մտրակը ձեռքին: (վիճակի)

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է գտնել տրված նախադասությունների՝ տրական հոլովով դրված բառերը և դրանք ստորոգյալների հետ դարձնել բառակապակցություններ:



Ուսուցիչն օրինակների վրա ցույց է տալիս, որ խնդրային իմաստները կարելի է որոշել բայիմաստով, իսկ պարագայական իմաստները՝ հարցով:

Քայլ 6. Ուսուցիչը կիրառում է «Եռաստիճան հարցազրույց» մեթոդը: Դասարանը բաժանվում է չորս խմբի: Սկզբում յուրաքանչյուր աշակերտ աշխատում է անհատապես: Ուսուցիչը ամեն աշակերտի տալիս է քարտ, որի վրա ներկայացված է տրական հոլովի նրբիմաստներից որևէ մեկը: Որոշ ժամանակ հետո խմբի անդամները իրենց սովորածները իրար են բացատրում: Այսպես բոլոր խմբերը, իսկ վերջում ներկայացվում են խմբերի ընդհանուր աշխատանքները: Այս մեթոդով կարևորվում է աշակերտների ինքնուրույն աշխատանքը, և նյութի յուրացումը դառնում է դյուրին:

Կշռադատման փուլ

Քայլ 7. Աշակերտները աշխատում են նույն խմբերով: Յուրաքանչյուր խմբի ուսուցիչը քարտեր է բաժանում՝ հագեցած բնագրային հինգական օրինակով: Աշակերտները պետք է ընդգծեն տրական հոլովով դրված բառերը և որոշեն դրանց նրբիմաստները:

Խումբ 1

1. Համեմատական երջանկությանը հաջորդեցին անհամեմատ ձախորդությունն ու դժբախտությունը:
2. Հանձնաժողովին ուղեկցում է ճամբարի պետը:
3. Ղարաբաղը պոկեմ Ադրբեջանից ու Հայաստանին կցեմ:
4. Մարիինսկում հանդիպեցինք Մեսրոպին:
5. Ամբողջ աշխարհը վերածված կլիներ մի անծայրածիր գերեզմանոցի:

Խումբ 2

1. Կինը կալանավորուհի էր և պատկանում էր Չիտայից եկած նոր էտապին:
2. Օրինազանցներին սպառնում էր խիստ պատիժ:

3. Կեսգիշերին գալիս էր Աշոտ դային:
4. Սիրով օգնում էր գրեթե բոլորին:
5. Անցյալ տարի մայիսի մեկին Աշոտ դային ինձ խնամքով ածիլեց:

Խումբ 3

1. Խնդիրը վերաբերում էր ոչ թե հանցանք գործելուն կամ չգործելուն, այլ բռնվելուն կամ չբռնվելուն:
2. Իսկապես, քաղխորհրդի նախագահը շատ նման էր ճապոնացու:
3. Սիրով օգնում էր գրեթե բոլորին:
4. Լյուդմիլան միանում է նրանց:
5. Մամոն ճարպիկ ոտներով ցատկում է հողաբլրին:

Խումբ 4

1. Դյուժինգրադը վերածվեց հիվանդանոցային պալատի:
2. Նա աղյալը քաշել էր մինչև վիզը և պառկած կռնակին, բաց աչքերով, ինչպես երևում է, երազում էր:
3. Ճաշին բավականին առատությամբ բաժանեցին մանր, աղի ձուկ:
4. Նա նման է այն տնքացող, անանուն գազանին, որին օրեր առաջ հոշոտեցին ու կերան:
5. Այդպես նայում է հավատացյալը սրբապատկերին, աղվեսը՝ խաղողին, կամ երևի Ռոմեոն՝ Ջուլիետային:

Քայլ 8. Այս վարժության արդյունները քննարկելուց հետո տեսասահիկի վրա որոշակի ընդմջումով երևում են վիպակից քաղված յոթ օրինակներ: Աշակերտների խնդիրն է հնարավորինս արագ որոշել տրական հոլովով դրված բառերի նրբիմաստները և գրառել:

Այո՛, Բելուգովը կամերա մտավ հարաբերական այն առողջությամբ, ինչ հատուկ էր ամեն **կալանավորի**: (բնութագրման)

Ճիշտ ժամանակին միանում են **երգիչներին**: (կապակցման)

Հիմա նրա աշխատանքները անգամ **մի քանի կոպեկի** չեն վերցնում: (չափի)

Հետո նա մի քանի մեծ կտոր խոզի ճարպ է փոխանցում **Աշոտ դայուն**: (մատուցման)

Նա, ըստ երևույթին, **գերմանուհուն** ինչ-որ բան էր բացատրում կամ գուցե պատմում: (հաղորդման)

Այդ չորս տողը պատկանում է իմ ուսուցչի՝ ընդամենը երկու բարեկամներից մեկի **գրչին**: (ստացական)

Դրանցից մի մասը կմահանա, մի մասը կխելագարվի, իսկ մեծ մասին կքշեն հյուսիս, համակենտրոնացման ճամբարները (կոնցենտրացիոն լագերներ)՝ ծանր **աշխատանքի**: (նպատակի)

Ավարտելուց հետո նախադասությունները միասին վերլուծում են, և յուրաքանչյուրի ճիշտ պատասխանների միավորները գումարվում են թիմերի՝ նախորդ աշխատանքից վաստակած միավորներին: Որոշվում է հաղթող թիմը:

Տնային աշխատանքի հանձնարարում: Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից դո՛ւրս գրել քսան նախադասություն, որոնցում առկա են տրական հոլովով դրված անդամներ, որոշե՛լ նրանց իմաստային առումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով տրական հոլովի իմաստային դրսևորումները՝ հանգել ենք մի շարք եզրակացությունների:

1. Տրական հոլովի խնդրային և պարագայական իմաստները ունեն հաճախականության տարբեր դրսևորումներ: Առավել շատ հանդիպում են խնդրային իմաստներ. հաճախադեպ են հանգման, մատուցման, հաղորդման, շահի և վնասի, ուղղության տրականները:
2. Հանգման տրականը ունի բազմաթիվ կիրառություններ, որոնք առավել շատ գործածվում են *մոտենալ, հանդիպել, դիպչել* բայերի կողքին: Շահի կամ վնասի տրականը ևս հաճախված է: Շահի կամ վնասի տրականով դրված օրինակների մեջ առավել գերակշռող են շահի իմաստով գործածված ձևերը:
3. Մատուցման և հաղորդման տրականների ձևերը բավական հաճախված են : Հանդիպում ենք մատուցման տրականի կիրառությունների համարյա բոլոր բայերի կողքին՝ *տալ, հանձնել, ընծայել, նվիրել* և այլն: Սակայն հաղորդման տրականով օրինակները սակավ բայերի կողքին են հանդիպում՝ *պատմել, հաղորդել, հայտնել, ասել:* Ընկալման տրականով օրինակները սակավ են, ընդամենը մի քանի օրինակներ, որոնք հանդես են գալիս որպես *լսել* բայի լրացում:
4. Վերածման տրականը սակավադեպ է: Այս իմաստով այն դրվում է գերազանցապես *վերածվել* բայի կողքին: Բաժանման, մասնատման տրականը ևս հաճախված չէ և գլխավորապես հանդիպում է *բաժանել* բայի կողքին, իսկ մյուս բայերով գործածություններ չեն հանդիպում: Սակավադեպ են համեմատության, հավելման և փոխարինության տրականներով ձևերը:
5. Ստացական և բնութագրման տրականներով ձևեր քիչ հաճախականությամբ են գործածվում: Նկատել ենք, որ ստացական տրական լրացումը գլխավորապես հանդես է գալիս *պատկանել, վերագրվել* բայերի կողքին, իսկ բնութագրման տրականը գործածվել է իբրև *հատուկ, բնորոշ* ստորոգելիների լրացում: Սակավադեպ է նաև նմանության կամ համապատասխանության տրականի կիրառությունը, որի բոլոր օրինակները հանդես են գալիս որպես *նման* ստորոգելիի լրացում: Իսկ կապի

տրականը բոլոր բայերի հետ չի գործածվում, միայն *մասնակցել, ուղեկցել* բայերի կողքին ենք նկատել այսպիսի լրացումների գործածություն:

6. Ներգործող խնդրի տրականով ձևերի քիչ են, որովհետև այս իմաստային առման կիրառման շրջանակը նեղանում է: Բացառական և գործիական հոլովները այժմ ավելի ուժեղ են ընկալվում այդ պաշտոնում: Վերաբերության տրական իմաստային առումը ևս սակավադեպ է, որովհետև այս իմաստը սովորաբար արտահայտվում է *սեռական հոլով+վերաբերության կապ* կապային կառույցով, բացառական հոլովով:

7. Ուղղության տրականով ձևերը բավականին շատ են: Սրանք հատկապես շատ են գործածվում *նայել* բայի հետ:

8. Տրական հոլովի պարագայական իմաստներից առավել հաճախված են տեղի, ժամանակի և նպատակի տրականները:

9. Ձևի տրականով օրինակները շատ քիչ են: Վիճակի տրականը ձևի տրականի համեմատ շատ է գործածվում: Պատճառի և հիմունքի տրականով ձևերի գրեթե չենք հանդիպում, քանի որ պատճառի և հիմունքի արտահայտման համար հիմնականում կիրառվում են համապատասխան կապերը, բացառական ու գործիական հոլովները:

10. Տրական հոլովի իմաստային առումների իմացությունը կնպաստի խոսքում խնդրառական սխալներից խուսափելուն, կօգնի տարբերակելու հոլովված բառերի դրսևորումները խոսքում, աշակերտները կխորացնեն իրենց գիտելիքները հոլովների վերաբերյալ՝ առնչվելով իրենց անծանոթ իմաստային առումներին, հստակ կտարբերակեն անձնանիշ գոյականների՝ հայցականով կիրառությունները տրականով կիրառություններից: Այս ամենի արդյունքում կզարգանա աշակերտների լեզվամտածողությունը:

11. Մեր առաջադրած մեթոդական համակարգը բավական արդյունավետ կարող է լինել աշակերտների ձևաբանական գիտելիքները հարստացնելու գործում: Ավագ դպրոցի հումանիտար հոսքում սովորողների հիմնական մասը կարող է ուսումը շարունակել բուհերի մասնագիտական ֆակուլտետներում, հետևաբար տրական հոլովի նրբիմաստների ուսուցումը նույնիսկ անհրաժեշտ է այն դասարաններում, որոնք համալրված են բանասիրական ուղղվածություն ունեցող սովորողներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տեսական գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 699 էջ:
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, 558 էջ:
3. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, 401 էջ:
4. Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, 298 էջ:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, 1989, 432 էջ:
6. Դոխոյան Ռ., Ասացական բայերի ոճական առանձնահատկությունները, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014:
7. Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., տեսական և գործնական հայոց լեզու (ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, 293 էջ:
8. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, 336 էջ:
9. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, 92 էջ:

Մեթոդական գրականություն

1. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, 74 էջ: Էլեկտրոնային տարբերակը՝ http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf:
2. Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Դիշաղաջյան Ն., Փուլային ուսուցման եղանակ (ավագ դպրոց), Երևան, 2014, 154 էջ:
3. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, 101 էջ:

Գեղարվեստական գրականություն

1. Մահարի Գ., Ծաղկած փշալարեր, Երևան, 1988, 192 էջ: